ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀՌՑ-ԳՀԾՁԲ-19/17/1-2

ՀՀՌՑ ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԵՆՔԵՐԻ և ՏԱՆԻՔՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՆԱԽԱԳԾԱ-ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ք.Երևան «17» 10 2019 թ.

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Մ. Միլիտոնյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Ա. Հովհաննիսյան, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է շենքերի և տանիքների վերանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման, ծախսերի գնահատման ծառայության մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է Պայմանագրի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը Պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել Պպայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե Ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պահանջներին:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխանող Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (հավելված N 3) ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով Ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

3.2 Եթե Ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն Պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 /տասը/ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված Ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե Պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված Ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված Ծառայությունը համարվում է ընդունված և Պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 726 000 (յոթ հարյուր քսանվեց հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն **պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:**

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են **Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:**

5.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացած օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների

պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է 11 /տասնմեկ/ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95	ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի պող. 16շ., բն. 22
«Ամերիաբանկ» ՓԲԸ	«ԱԿԲԱ - ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ «Տերյան» մ/ճ
հ/հ 1570027609970100	հ/հ 220563331143000
ՀՎՀՀ 01501898	ՀՎՀՀ 00146655
	Էլ հասցեն՝ capital.project@hotmail.com
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

17 10 Հավելված N 1
2019 թ. կնքված
ՀՀՌՅ-ԳՀՇՁԲ-19/17/1-2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ կարիքների համար ՇԵՆՔԵՐԻ և ՏԱՆԻՔՆԵՐԻ վերանորոգման նախագծա–նախահաշվային փաստաթղթերի մշակման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման

Ծառայության								
Հ/Հ	CPV կոդը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/հազ. ՀՀ դրամ	ընդհանուր գինը /հազ. ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	Ժամկետը
1	71241200	***Պահակատուն (անցակետ)*** անցակետի (անցագրային կետի) շենքի վերանորոգման նախագծա–նախահաշվային փաստաթղթերի մշակման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերում՝ փորձաքննությամբ	դրամ	204.0	**204.0**	1	ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օր
2	71241200	***Տրանսֆորմատորային ենթակայան ԳԵ-126*** Երևանի հաղորդիչ կենտրոնի տարածքում գործող ԳԵ-126 տրանսֆորմատորային ենթակայանի (6.2մx9.2մ հատակագծում) բառալանջ տանիքի վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերում՝ փորձաքննությամբ	դրամ	124.0	**124.0**	1		
3	71241200	***Տրասֆորմատորային ենթակայան ԳԵ-290*** Երևանի հաղորդիչ կենտրոնի տարածքում գործող ԳԵ-290 տրանսֆորմատորային ենթակայանի (8.8մx9.2 և 8.8x3.4մ հատակագծում) երկմակարդակ տանիքի վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և ծախսերի գնահատման ծառայության ձեռքբերում՝ փորձաքննությամբ	դրամ	194.0	**194.0**	1		
5	71241200	**Տրանսպորտային ծառայության վարչական հատվածի** վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և ծախսերի գնահատման ծառայության ձեռքբերում՝ փորձաքննությամբ	դրամ	204.0	**204.0**	1		

Չափաբաժին 1

Ընդհանուր նկարագրություն

Շինարարության նկարագիրը՝

Անցակետի (անցագրային կետի) շենքի տարածքում անհրաժեշտ է առկա միջնապատերի վերահատակագծում, հատակների կառուցում, պատերի և առաստաղների հարդարում, ջրամատակարարման, կոյուղու, կապի և հակահրդեհային ազդանշանային ու օդափոխության համակարգերի տեղադրում: Հարթ, փափուկ ծածկույթով տանիքի վրա մետաղյա կմախքով և թիթեղյա ծածկույթով տանիքի իրականացում: Պարապետերի թիթեղյա ծածկույթի փոխարինում: Օդորակիչների էլեկտրասնուցման համար նախատեսել վարվարդակների տեղադրում:

Կառուցապատման մակերեսը՝ մոտ 50 մ² ներքին մակերես:

Նախագծման ելակետային փվյալները

Վերանորոգվող հարկաբաժնի հատակագիծը (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի համապատասխան մասի լուսապատճենը):

Նախագծման առաջադրանք

Նախագծերում ընդգրկել հետևյալ աշխատանքները

Նախագծվող մասերի մանրամասն չափագրությունները
Նախագծվող մասերի ճարտարապետաշինարարական աշխատանքային գծագրերի մշակումը
Նախագծվող աշխատանքների համար տեխնիկական մասնագրերի պատրաստումը

Աշխատանքներին ներկայացվող պահանջները

Գոյություն ունեցող փափուկ ծածկույթով հարթ տանիքի վրա մետաղյա կմախքով և թիթեղյա ծածկույթով տանիքի կառուցում;
Պարապետների թիթեղյա ծածկույթի փոխարինում;
Ծածկի երկաթբետոնե կոնսոլային հատվածի սվաղում ցեմենտ-ավազե շաղախով;
Կառույցի ճակատների ֆելզիտե քարերի հոկում և լաքապատում;
Շենքի հիմքերի երեսապատում բազալտե սալիկներով;
Պատուհանների փոխարինում մետաղապլաստե կաղնագույն պատուհաններով (ներառյալ պատուհանագոգերը);
Արտաքին պատուհանագոգերի տեղադրում (թիթեղ կամ բազալտե սալեր);
Մուտքերի և ներքին դռների փոխարինում մետաղապլաստե կաղնագույն դռներով;
Մուտքամասերում բազալտե սալերով աստիճան-հարթակների կառուցում;
Միջնորմային պատերի վերահատակագծում;
Ներքին հարդարում (նոր պատերի և շեպերի սվաղում գաջով, գույություն ունեցող սվաղի վերանորոգում, ծեփամածկում և ներկում լատեքսային ներկով);
Հատակների իրականացում խեցեսալե և կերամոգրանիտե սալերով (ներառյալ կերամոգրանիտե շրիշակները);
Սանիտարական հանգույցի պատերի երեսապատում հախճասալով, զուգարանակոնքի, լվացարանի և էլեկտրաջրատաքացուցիչի տեղադրում;
Սանիտարական հանգույցների կախովի առաստաղների իրականացում պլաստմասե շերտապրոֆիլով;
Նախատեսել ներքին ջրամատակարարման (տաք և սառը), կոյուղու, կապի, օդորակման, էլեկտրալուսավորման («ԼԵԴ» տիպի էներգախնայող լամպեր) և հակահրդեհային ազդանշման համակարգեր;
Շին. աղբի մաքրում, հավաքում, բարձում ավտոինքնաթափ և տեղափոխում թափոնատեղ:

Նախագծի կազմը. չափագրման մանրամասն գծագրեր, բացատրագրեր յուրաքանչյուր մասի համար, հատակագծեր, ինժեներական ենթակառուցվածքների գծագրեր, պրոֆիլներ, կտրվածքներ, շին. աշխատանքների կատարման մասնագրեր, հանգույցներ, տեխնիկական մասնագրեր, ըստ նախագծի իրականացվող աշխատանքների մանրամասն ծավալներ:

Այլ պահանջներ.

ՀՀ օրենսդրությամբ նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննությունը կկատարվի նախագծողի կողմից:
Նախագծի հեղինակային հսկողության աշխատանքները կձևակերպվեն առանձին պայմանագրով:
Նախագիծը ներկայացնել 5օրինակից, հայերեն և ռուսերեն լեզուներով, միաժամանակ էլեկտրոնային կրիչով:
Ծավալաթերթը ներկայացնել 2 թղթային օրինակից, միաժամանակ էլեկտրոնային «Excel» տարբերակով:
Այլ փաստաթղթեր՝ շինարարական աշխատանքներ կատարելու համար պահանջվող **լիցենզիաներ**, աշխատանքային ռեսուրսներ, տեխնիկական միջոցներ, շինարարության (կապալի) օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներ:

Չափաբաժին 2

Նախատեսվող աշխատանքները՝
Թիթեղյա ծածկույթի քանդում
Փայտյա կմախքի քանդում
Մետաղյա պրոֆիլներով կմախքի կառուցում՝ պահպանելով տանիքի երկրաչափական չափերը
Մետաղյա պրոֆիլների նախաներկում
Տանիքածածկի տեղադրում á=0.5 մմ հաստությամբ պրոֆիլավոր գունավոր թիթեղից
Գունավոր թիթեղից կախովի ջրհորդանների, խողովակների, ձագարների և գագաթաթիթեղների տեղադրում
Անհրաժեշտության դեպքում պատերի վերին շարքի տուֆե քարերի ամրացում
Ենթակայանի մետաղյա դռների և դարբասների ներկում
Մուտքի աստճանների երեսապատում բազալտե սալիկներով
Շինարարական աղբի մաքրում, իջեցում, բարձում ավտոինքնաթափ և տեղափոխում թափոնատեղ;
Նախագծի կազմը. չափագրման մանրամասն գծագրեր, բացատրագրեր յուրաքանչյուր մասի համար, հատակագծեր, ինժեներական ենթակառուցվածքների գծագրեր, պրոֆիլներ, կտրվածքներ, շին. աշխատանքների կատարման մասնագրեր, հանգույցներ, տեխնիկական մասնագրեր, ըստ նախագծի իրականացվող աշխատանքների մանրամասն ծավալներ:

Այլ պահանջներ.
ՀՀ օրենսդրությամբ նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննությունը կկատարվի նախագծողի կողմից:
Նախագծի հեղինակային հսկողության աշխատանքները կձևակերպվեն առանձին պայմանագրով:
Նախագիծը ներկայացնել 5 օրինակից, հայերեն և ռուսերեն լեզուներով, միաժամանակ էլեկտրոնային կրիչով:
Ծավալաթերթը ներկայացնել 2 թղթային օրինակից, միաժամանակ էլեկտրոնային «Excel» տարբերակով:
Այլ փաստաթղթեր՝ շինարարական աշխատանքներ կատարելու համար պահանջվող **լիցենզիաներ**, աշխատանքային ռեսուրսներ, տեխնիկական միջոցներ, շինարարության (կապալի) օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներ:

Չափաբաժին 3

Նախատեսվող աշխատանքները՝
Թիթեղյա ծածկույթի քանդում
Փայտյա կմախքի քանդում
Մետաղյա պրոֆիլներով կմախքի կառուցում՝ պահպանելով տանիքի երկրաչափական չափերը
Մետաղյա պրոֆիլների նախաներկում
Տանիքածածկի տեղադրում á=0.5 մմ հաստությամբ պրոֆիլավոր գունավոր թիթեղից
Գունավոր թիթեղից կախովի ջրհորդանների, խողովակների, ձագարների և գագաթաթիթեղների տեղադրում
Անհրաժեշտության դեպքում պատերի վերին շարքի տուֆե քարերի ամրացում
Ենթակայանի մետաղյա դռների և դարբասների ներկում
Շինարարական աղբի մաքրում, իջեցում, բարձում ավտոինքնաթափ և տեղափոխում թափոնատեղ
Նախագծի կազմը. չափագրման մանրամասն գծագրեր, բացատրագրեր յուրաքանչյուր մասի համար, հատակագծեր, ինժեներական ենթակառուցվածքների գծագրեր, պրոֆիլներ, կտրվածքներ, շին. աշխատանքների կատարման մասնագրեր, հանգույցներ, տեխնիկական մասնագրեր, ըստ նախագծի իրականացվող աշխատանքների մանրամասն ծավալներ:

Այլ պահանջներ.
ՀՀ օրենսդրությամբ նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննությունը կկատարվի նախագծողի կողմից:
Նախագծի հեղինակային հսկողության աշխատանքները կձևակերպվեն առանձին պայմանագրով:
Նախագիծը ներկայացնել 5 օրինակից, հայերեն և ռուսերեն լեզուներով, միաժամանակ էլեկտրոնային կրիչով:

Ծավալաթերթը ներկայացնել 2 թղթային օրինակից, միաժամանակ էլեկտրոնային «Excel» տարբերակով:
Այլ փաստաթղթեր՝ շինարարական աշխատանքներ կատարելու համար պահանջվող **լիցենզիաներ**, աշխատանքային ռեսուրսներ, տեխնիկական միջոցներ, շինարարության (կապալի) օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներ:

Չափաբաժին 5

Շինարարության նկարագիրը՝

Տրանսպորտային ծառայության վարչական հատվածի հատակների կառուցում, պատերի և առաստաղների հարդարում, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, կապի, հակահրդեհային ազդանշման և էլեկտրալուսավորման համակարգերի տեղադրում:

Նախագծման ելակետային տվյալները

Վերանորոգվող հարկաբաժնի հատակագիծը (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի համապատասխան մասի լուսապատճենը):

Նախագծման առաջադրանք

Նախագծերում ընդգրկել հետևյալ աշխատանքները
Նախագծվող մասերի մանրամասն չափագրությունները
Նախագծվող մասերի ճարտարապետաշինարարական աշխատանքային գծագրերի մշակումը
Նախագծվող աշխատանքների համար տեխնիկական մասնագրերի պատրաստումը
Նախագծի կազմը. չափագրման մանրամասն գծագրեր, բացատրագրեր յուրաքանչյուր մասի համար, հատակագծեր, ինժեներական ենթակառուցվածքների գծագրեր, պրոֆիլներ, կտրվածքներ, շին. աշխատանքների կատարման մասնագրեր, հանգույցներ, տեխնիկական մասնագրեր, ըստ նախագծի իրականացվող աշխատանքների մանրամասն ծավալներ:

Այլ պահանջներ.

ՀՀ օրենսդրությամբ նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննությունը կկատարվի նախագծողի կողմից:
Նախագծի հեղինակային հսկողության աշխատանքները կձևակերպվեն առանձին պայմանագրով:
Նախագիծը ներկայացնել 5 օրինակից, հայերեն և ռուսերեն լեզուներով, միաժամանակ էլեկտրոնային կրիչով:
Նախահաշիվը և ծավալաթերթը ներկայացնել 2 թղթային օրինակից, միաժամանակ էլեկտրոնային «Excel» տարբերակով:
Այլ փաստաթղթեր՝ շինարարական աշխատանքներ կատարելու համար պահանջվող **լիցենզիաներ**, աշխատանքային ռեսուրսներ, տեխնիկական միջոցներ, շինարարության (կապալի) օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
«Սարերի ... » ՓԲԸ
h/h 1570027609270100
ՀՎՀՀ 01501898

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի պող. 16շ., բն. 22
«ԱԿԲԱ - ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ «Տերյան» մ/ճ
h/h 220563331143000
ՀՎՀՀ 00146655
Էլ հասցեն՝ capital.project@hotmail.com

/ստորագրություն/
Կ.Տ

17 10 Հավելված N 2
2019 թ. կնքված
ՀՀՌՏ-ԳՀԾՁԲ-19/17/1-2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության															
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում, հազ. դրամ												
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանում	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200	***Պահակատուն (անցակետ)*** անցակետի (անցագրային կետի) շենքի վերանորոգման նախագծա–նախահաշվային փաստաթղթերի մշակման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերում՝ փորձաքննությամբ:	0	0	0	0	0	0	0	0	0	204.0	204.0	204.0	**204.0**
2	71241200	***Տրանսֆորմատորային ենթակայան ԳԵ-126*** Երևանի հաղորդիչ կենտրոնի տարածքում գործող ԳԵ-126 տրանսֆորմատորային ենթակայանի (6.2մx9.2մ հատակագծում) քառալանջ տանիքի վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերում՝ փորձաքննությամբ:	0	0	0	0	0	0	0	0	0	124.0	124.0	124.0	**124.0**
3	71241200	***Տրասֆորմատորային ենթակայան ԳԵ-290*** Երևանի հաղորդիչ կենտրոնի տարածքում գործող ԳԵ-290 տրանսֆորմատորային ենթակայանի (8.8մx9.2 և 8.8x3.4մ հատակագծում) երկմակարդակ տանիքի վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և ծախսերի գնահատման ծառայության ձեռքբերում՝ փորձաքննությամբ:	0	0	0	0	0	0	0	0	0	194.0	194.0	194.0	**194.0**
5	71241200	**Տրանսպորտային ծառայության վարչական հատվածի** վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և ծախսերի գնահատման ծառայության ձեռքբերում՝ փորձաքննությամբ:	0	0	0	0	0	0	0	0	0	204.0	204.0	204.0	**204.0**

*Վճարումները նախատեսվում են ամբողջությամբ ներկայացվում են աճողական կարգով:

ՊԱՏՎԵՐԱՏՈՒ
ՀՀ, ք. Երևան, Հարք, Հովսեփյան 95
«Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով» ՓԲԸ
հ/հ 15700276699970100
ՀՎՀՀ 01501888

/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի պող. 16շ., բն. 22
«ԱԿԲԱ - ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ «Տերյան» մ/ճ
հ/հ 220563331143000
ՀՎՀՀ 00146655
Էլ հասցեն՝ capital.project@mail.ru

/ստորագրություն/